**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 04.08.2022թ.**
**N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/35-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «07» դեկտեմբերի 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Կարեն Գևորգյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Կ. Գևորգյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 04.08.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/35-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի **4 702 500 (չորս միլիոն յոթ հարյուր երկու հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ ընդհանուր գնից Պայմանագրի Հավելված N 2-ով նախատեսված 150 հատ գրասեղաններից 140 հատ գրասեղանների մասով **4 389 000 (չորս միլիոն երեք հարյուր ութսունինը հազար)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ժամկետը» սյունակում նշված «30 օրացուցային օր» բառերը փոխարինել «մինչև 2022թ. դեկտեմբերի 23-ը ներառյալ» բառերով:

1.2. 04.10.2022թ. Կողմերի միջև կնքված N 1 համաձայնագրով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 2 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *Դատական դեպարտամենտ* | *Ա/Ձ Կարեն Գևորգյան* |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Լուկաշինի 1փ.9/1 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 27889602 |
| Հ/Հ՝ 900011025757 | Հ/Հ՝ 2232200251400\1 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ԱՐՑԱԽԲԱՆԿ ՓԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Կ. Գևորգյան |
| ------------------ /ստորագրություն/ Կ.Տ | ------------------ /ստորագրություն/ |

**Հավելված N 1**
**« 07» դեկտեմբերի 2022թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 04 » « 08 » 2022թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/35-2» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 39121100/15 | Գրասեղաններ | 313 500 | 313 500 | 4 702 500 | **4 702 500** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան

_______________
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***Ա/Ձ Կարեն Գևորգյան***
Հասցե՝ ք. Երևան, Լուկաշինի 1փ.9/1
ՀՎՀՀ՝ 27889602
Հ/Հ՝ 22322002514001
ԱՐՑԱԽԲԱՆԿ ՓԲԸ

Տնօրեն՝ Կ. Գևորգյան

_______________
/ստորագրություն/